

Շ Ր Ա Գ Ի Բ

Մ Ի Զ Ն Ա Կ Ա Ր Գ Դ Պ Ր Ո Ց Ն Ե Բ Ի

(Քաղաքի յեզ գյուղի)

(Հաստաված Լ. Փ. Կ. կոլեգիայի կողմից)

IX Պ Բ Ա Կ

Յ Ե Ր Ա Ժ Շ Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ



Պ Ե Տ Տ Հ Ր Ա Տ Ս Ո Ւ Ս Ս Ա Ն Կ Հ Ր Ա Տ Բ Ա Ժ Ի Ն

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1933

- DEC 2017

Պատաժանառության իմբարդիք՝ Մ. ՍԱՆԹՐՈ ԵԱՆ
Ծրագիրը մշտիկ են ընկ. ըեկ. Կ. Զաքարյան յեզ Մ. Սաղմանակ
Լեզզ. Խմբագիք՝ Ա. ԱՆԴՐԱՍՅԱՆ
Մրրագրիչ՝ Վ. Տերոյան

Գլուխացի տպարան
պատիք Հ 2 00.
իրատ. № 2754-(թ)
Գրադի. 8317.
տիքած
1000



11-2107

Հանձնված և արտադրության 9 հոկտ. 1933
Մարդարկան և ապագրելու 19 հոկտ. 1933

Программа для средних школ
IX часть, Музыка
Гиз ССР Армении, 1933, Эривань

ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Պոլիտեխնիկ գպրոցում յերաժշտական դաստիարակությունը կազմում է կոմունիստական դաստիարակության ընդհանուր սիստեմի մի ողակը:

Յերաժշտությունը, ինչպես գպրոցական այլ դիսցիլինները, պետք է կատարի այն խնդիրը, վոր կենտկոմը 1931 թ. սեպտ. 5-ի և 1932 թ. սեպտ. 25-ի իր վորոշումներով առաջադրել է գպրոցներին:

Յերաժշտական կուլտուրայի յուրացումը պետք է անշի ունենա թե յերեխաների կատարողական վորակի բարձրացման և թե անցյալի ու ներկայի յերաժշտական կուլտուրայի լավագույն նմուշների ծանոթության միջոցով:

Ծրագիրը, սկսած առաջին տարվանից, նկատի ունի աստիճանաբար և վորոշ հետեւղականությամբ յերեխաների մեջ զարգացնել յերաժշտական դիտելիքներ և ունակություներ: Ծրագրի նյութն այդ ձեռով ու հետեւղականությամբ է դասավորված:

Առաջին աստիճանի աշխատանքների հիմքում դըրքում և յերաժշտական այնպիսի նյութ, վորը պետք է մտցնել ու ամրապնդել յերեխաների կենցաղում և դաստիարակել նրանց յերաժշտական ճաշակը: Յերկրորդ աստիճանում մացնվում են պատմական տարրեր, սակայն այդ նյութերը դասավորվում են վո'չ թե ժամակագրական կարգով, այլ նկատի յե առնվում նրանց աստիճանական բարդությունը և կարեռությունը:

Աշխատանքն սկսվում է յերեխայի համար ամենից մատչելի նյութերից: Պատմականին գուղքնթաց տրվում են նաև ժամանակակից նյութեր:

Հինգերորդ խմբում ծանոթություն ե տրվում առանձին յերաժշտագետների մասին: Հավաքվում են նյութեր՝ հետազյում ավելի խորացրած մշակելու նպատակով: Հասկացողություն ե տրվում հեղինակների ստեղծագործությունների մասին, պարզելով նրանց բնույթն ու բովանդակությունը: Այս խմբում անցնում են Բեթհովենի, Շուրերտի և Գրիգի ստեղծագործությունները, նմանապես հայ Ժողովրդական յերգերը՝ հարևան աղջությունների յերաժտությունն, ժամանակակից մասսայական յերգեր և նրանց ակունքները կտղմող հին հեղափոխական յերգեր:

Վեցերորդ խմբում տրվում են մինչ ֆրանս. հեղափողության ըրջանի (Գլյուկ, Ռամո, Մոցարտ, Հայդն) և ռոմանտիկ յերաժտության ներկայացուցիչներ՝ Շումանի և Շոպենի ստեղծագործությունները, ԽՍՀՄ-ի աղջությունների յերգերը և ապա հայ յերաժտության զարգացման սկզբնական ըրջանի յերաժշտագետների ստեղծագործությունները:

Պոթերորդ խմբի թեմատիկան ընդգրկում է ֆրանսիական Մեծ հեղափոխության (Բեթհովեն) և բուժության տիրապետության ըրջանները, նյութ ունենալով 19-րդ դարի յերաժշտագետներ Գլինկայի, Չայկովսկու, Ռիմսկի-Կորսակովի և Մուսորգսկու ստեղծագործությունները: Այս տարվա մշակման նյութ ե ծառայում նաև հայ յերաժտության զարգացման հետազարֆանը, յերբ յերեխանները ծանոթանում են մեր սիմֆոնիկ, ինստրումենտալ և վոկալ յերաժտության ներկայացուցիչների հետ:

Եկրաժշտության գրագիտությունից յերեխանները պետք ե կարողանան նոտաներով կարդալ պարզ յերգերի որինակներ և դրության պրիմիտիվ ձևեր: Նրանք ծանոթանում են նաև անցյալի ու ներկայի աչքի ընկնող յերաժշտագետների, ինչպես և համաշխարհային յերաժտական ստեղծագործությունների հետ:

Եկրաժշտության ծրագրի մեջ մտնում են՝ խմբական յերգեցողություն, յերաժշտական գրագիտություն, յերաժտության ունկնդրություն, յերաժշտական գի-

տելիքներ և ծանոթություն յերաժշտագետների մասին (գրույցներ, ընթերցումներ և այլն):

Յերաժշտական գրագիտության աշխատանքները պետք ե շաղկապել խմբական աշխատանքների ժամանակ մշակվող կամ առաջներում անցած յերգերի հետ: Կարելի յե ոգտագործել նաև ունկնդրության ժամերին անցած յերգերը:

Յերաժշտագետների ստեղծագործությունների բընույթի հետ կարելի յե ծանոթանալ ունկնդրության, խմբական յերգեցողության, գրույցների և ընթերցումների միջոցով:

Ունկնդրության համար ծրագրում նշված նյութերի մի մասը կարելի յե փոխարինել մի այլ համապատասխան նյութով, վորը գասատուն հարմար կգտնի ծրագրում նշված սոնատը կամ պրելյուդը կարելի յե փոխարինել մի այլ սոնատով կամ պրելյուդով):

Ունկնդրության նյութերից տրված ե մաքսիմումը. դրանցից մի մասը կարելի յե տալ ուաղիոյի կամ համեմուների միջոցով:

Յերկրորդ կոնցենտրում հատուկ ուշագրություն պետք ե գարձնել գեղարվեստական կատարման ունակության վրա: Անցնելիք ռեպերտուարը ծրագրում տրված է իրեն որինակելի: Կարելի յե անցնել թեմայում նշված վայր նյութերը, բայց անցած նյութերի կատարումը պետք ե լինի գեղարվեստորեն բարձրորակ: Հենց ակզբից յերեխաններին պետք ե սովորեցնել՝ յերգեր զեկավարել, քննալդատել կատարման ձևերը, դտնել կատարման լավագույն արտահայտիչ միջոցները, սիստեմատիկաբար ամրացնել և խորացնել յերգի գեղարվեստական կատարման ունակությունները:

Կյանքական ունակություններն ավելի լավ ե ձեռք բերել կենդանի յերգերի միջոցով: Մրա համար ել, յեթե գորեւե գժվարություն հաղթահարելու համար հարկաւայր լինի լրացուցիչ այլ նյութ կամ վարժություն, ապա պետք ե ծրագրում ցույց տրված յերգը փոխարինել մեկ ուրիշով:

Կանոնների կատարումն անհրաժեշտ է իրբե ու գուա-
կար վարժություն:

Զափաղանց անհրաժեշտ է, վոր յերեխաները ձեռք-
բերեն մասսայական յերգերն ինքնուրույն սովորելու
կարողություն. սրա համար նրանց տրվում է ավելի
պարզ յերգեր, քան նշանակված է ծրագրի մեջ:

Վորովհետև տղաներն այդ տարիքում ապրում են
իրենց ձայնի բեկման շրջանը, ուստի հարկավոր է ստեղ-
ծել այնպիսի պայմաններ, վոր նրանք ևս կարողանան
մասնակցել յերաժշտական բոլոր տեսակի աշխատանք-
ներին:

Մանկավարժական լավագույն մոտեցման դեպքում,
յեթե դասատուն հոգատար վերաբերմունք ունենա դեպի
տղաների ձայնը, յերգը կարելի յե տալ այն սահմաննե-
րում, վոր համապատասխանի նրանց ձայնածավալին
(դիապազոնին). սրա համար հարկավոր է տրանսպորտի
միջոցով իջեցնել կամ բարձրացնել յերգերը և նույնիսկ
հատուկ պարտիաներ գրել նրանց ձայնի համար: Այս
կերպ վարվելով հնարավոր կլինի տղաներին մինչև վեր-
ջըն ել (2-րդ կոնցենտրի բոլոր Յ տարիների ընթացքում)
մասնակցել տալ խմբական աշխատանքներին:

Թեմաների մշակումը պլանավորելիս, պետք է աշ-
խատել ամբողջական դաշտիար տալ տվյալ թեմայի
բովանդակության մասին: Յերաժշտության ուսումնա-
սիրության աշխատանքները չպետք է փոխարինել նրա-
շուրջը լոկ դատողություններ տարով: Դրա համար ել
յուրաքանչյուր թեմային պետք է հատկացնել վոչ ադե-
լի, քան 2—3 կազմակերպչական զրույց:

Յերաժշտական գիտելիքներն ավելի խորը յուրաց-
նելու համար պետք է մշտական կատ պահանել հասա-
րակիտության և գրականության դասատուների հետ,
իսկ յերաժշտության պատմության խնդիրն ուսումնա-
սիրելու համար անհրաժեշտ է մոտ ծանոթանալ նույն
դարաշրջանի գրականությանը և պատմությանը:

Սրա համար ել զրույցներ կազմակերպելիս պետք է
նկատի առնել այդ բնագավառում աշակերտների ձեռք-
բերած գիտելիքների պաշարը և դրան համապատասխան

բովանդակություն տալ յերաժշտական առաջադրու-
թյուններին:

Յերաժշտական աշխատանքների մեջ մեծ տեղ է
դրայի լուս ու աղիոն: Այն դեպքում, յերբ ուսուցիչը չունի
կատարողական անհրաժեշտ տվյալներ և յերաժշտու-
թյան անկնդրությունը կազմակերպելու համար դժվար
է գտնել մշտական կարող աշխատակիցներ, հարկավոր
է ունկնդրության ծրագրի դգալի մասի մշակման համար
ողտագործել ուղղիոյի միջոցով տրվող համերգներն ու
ոպերաները: Այստեղ, վորտեղ հնարավոր է, աշակերտ-
ներին պետք է տանել համերգներ և ոպերաներ, վորոնք
իրենց հերթին նմանապես լրացնում են դաստիարակում
մշակած թեման:

Նկատի առնելով, վոր մինչև այժմ յերաժշտական
աշխատանքների հաշվառման վրա պատշաճ ուշադրու-
թյուն չի դարձվել, այսուհետեւ մնհրաժեշտ և պահանձին
ուշադրությամբ հետեւել հաշվառման խնդրին: Դասա-
տուն հաշվառումը կատարում է իր մոտ գտնվող առան-
ձին տետրում: Հաշվառման մեջ շեշտվում են դիտելիք-
ների յուրացման բոլոր կարեոր մոմենտները.—այսին-
քըն՝ յերեխաների արտահայտած կարծիքները յերաժշ-
տության և յերաժշտագետների մասին, նրանց յերաժշ-
տական զարգացման աստիճանը և դեպի յերաժշտական
խնդիրները ցուցաբերած հետաքրքրությունը: Հաշվառ-
ման մյուս ձեւը, վոր միաժամանակ և աշխատանքի վո-
րակի բարձրացման խթան և հանդիսանում, —դա յե-
րաժշտության աշխատանքների հասարակական ցուցա-
դրումն է և նրանց քննարկումը՝ յերեխաների մասնակ-
ցությամբ:

Այստեղ պետք է քննության տոննվի վոչ միայն դրայ-
րոցական աշխատանքների արդյունքը (կատարման վո-
րակը), այլ և աշխատանքի մեթոդը, նրա կազմակերպ-
չական ձեւերը, յերեխաների ակտիվությունը, դիսցիպ-
լինան և այլն (յերեխաները հաշիվ են տալիս, թե ինչի
վրա և ինչպես են աշխատել տվյալ շրջանում, ինչ ճանա-
պարհով են ձեռք բերել այս կամ այն ցուցանիշները):

Աշակերտաների աշխատանքների անհատական հաշ-

վառումը կատարվում է աստիճանաբար, ամրող տար-
վա ընթացքում, նույնիսկ մի քանի տարիների ընթաց-
քում, յերբ ուսուցիչը հետևում է աշակերտների յերա-
ժշտական կարողությունների և ունակությունների զար-
գացման պրոցեսին:

Յուրաքանչյուր քառորդի վերջում տեղեկություն-
ներ են արվում խմբի աշխատանքների վորակի և ըստ
ծրագրի յուրացրած նյութի քանակի մասին:

Յերաժշտական գիտելիքների և նոտային գրագի-
տության յուրացումը կարելի յե ստուգել վոչ միայն յե-
րեխաների տված պատասխանների միջոցով, այլ և
նրանց գրավոր աշխատանքներով, վորակը նրանք պա-
տասխանում են մի քանի ստուգիչ հացերին:

Տարվա վերջը պետք է կազմել յուրաքանչյուր աշա-
կերտի համառոտ բնութագիրը:

Խմբակների աշխատանքները.

Յերաժշտական աշխատանքների ընթացքում ան-
շուշտ խմբերի մեջ աչքի յե ընկնում առավել շնորհալի,
յերաժշտական աշխատանքներով ավելի հետաքրքրվող
յերեխաների մի վորոշ ակտիվ, վորը ցանկություն ունի
ավելի խորանալու և ընդլայնելու իր յերաժշտական աշ-
խատանքները: Յուրաքանչյուր գպրոցում ցանկալի յե
համար յերգեցիկ խմբակ և մասսայական գործիքներից
կազմված նվազախումբ:

Խմբակները, բացի իրենց անմիջական աշխատանք-
ներից, վորոնք նպաստում են աշակերտների յերաժշտա-
կան և կատարողական վորակի բարձրացմանը, ահազին
դեր են կատարում նաև գպրոցական կյանքում իրենց
կազմակերպած յերաժշտական յելույթներով, ունկնդրու-
թյան ժամերով և այլն:

Մեծ և խմբակների դերը նաև քաղաքական կամպա-
նիաների և հեղափոխական առների սպասարկման գոր-
ծում (բեմագրություններ, մոնուաժներ, յերաժշտական
և որկեստրային յելույթներ և այլն):

Խմբակները պետք են ունենան ճիշտ ձեւակերպված
վորոշակի նպաստակներ և աշխատանքի ծրագիր: Խմբակի

անդամներն իրար հետ կապվում են փոխադարձ պար-
տավորություններով և ամուր կարգապահությամբ:
Խմբակային աշխատանքները, խորացնելով փոքր ի շա-
տե հետաքրքրվող աշակերտների յերաժշտական գիտե-
լիքներն ու ունակությունները, առավել հետաքրքրվող-
ների համար ճանապարհ են բացում գեղի մասնագիտա-
կան յերաժշտական գպրոցները, ուր նրանք հետազում
ստանալու յեն յերաժշտական մասնագիտական կրթու-
թյուն:

ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԽՈՒՄԲ

ԹԵՄԱՏԻԿԱ.

1. Հին հեղափոխական յերգեր.
2. Պիոներական, կոմյերիտական և մասսայական
յերգեր.
3. Արևմտյան Յեղրոպայի յերաժշտագետների
ժամանակա պայքարի յերգեր.
4. Հարեան աղգությունների յերգեր.
5. Հայ ժողովրդական յերգեր.
6. Անցյալի յերաժշտագետները—Բեթհովեն, Շու-
բերտ և Գրիգ.

ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ԴՐՈՒՅԹԾԻ

Յերեխաներին ավելի մոտ, հուզականորեն ավելի
գրավիչ նյութերի միջոցով խորացնել և սիստեմատիզա-
ցիայի յենթարկել առաջին աստիճանում նրանց ձեռք
բերած գիտելիքներն ու ունակությունները:

Օանոթացնել ժամանակակից հեղափոխական յեր-
գերի տկունքը հանդիսացող հին հեղափոխական յերգե-
րի հետ:

Գաղափար տալ, թե ինչպես ե զարգացել հայ և հա-
րեան աղգությունների յերաժշտական կուլտուրան և թե
ժամանակակից խորհրդային յերաժշտագետներն ինչպես
են ոգտագործել այդ նյութերը:

Յերեխաներին ծանոթացնել Բեթհովենի, Շուբերտի

և Գրիգի յերգերի և գործիքային ստեղծագործությունների հետ, պարզելով նրանց բնույթն ու բովանդակությունը: Յույց տալ, թե այդ յերաժշտագետները ժողովրդական յերաժշտությունն ինչպես են սուտագործել իրենց ստեղծագործությունների մեջ: Հիշյալ յերաժըշտագետների ստեղծագործության արժեքը մեզ համար:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Տարար բռնության չարչարանքը.
2. Վարշավյանկա.
3. Դու զոհ գնացիր.
4. Անվախ ընկեր.
5. Շախտյոր—Բելա Բեյնիցի.
6. Գերմանական բանվորների յԵրդը—Զեմբերջիկ.
7. Բարիկադ յելեք—(«Պիոներ. յԵրգեր» Ռ. Մելիքյան).
8. Գողոնա դա գողոնա (վրաց. ժող. մշակ. Պալեշվիլի).
9. Մուշտորա («Աշխատանք») յԵրաժշտ. Մշվելիդձե.
10. Շողեր ջան—Հայ ժող. յԵրգեր. մշակում Կոմիտասի.
11. Խումար պառկե—Հայ ժող. յԵրգեր. մշակում Կոմիտասի.
12. Զաղացպանը—Շուրերտի.
13. Զան, Աղրբեջան—Տեր-Ղեռնդյան.
14. Կոլեկտիվ (թուրքերեն—Շերֆեղինովի, Հոկտիոնի հորել. ժողովածու):

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Բեթհովեն—Մարչ—Աթենքի ավերակների վրա.
2. «» — Մահվան քայլերգ 12-րդ սոնատից.
3. «» — Սկերցոլա-մաժոր սոնատից:
4. Շուրերտ—Աշխաժություն.
5. «» — Վենգրական դիվերտիսմենտ.
6. «» — Ֆորել.

7. Գրիգ—Պեր-Գյունտ-սյուիտ.

8. «» — Փարուն.

9. «» — Նորվեգիական պարեր.

Գիշելիքներ Յեվ ԱհնԱկՈՒԹՅՈՒՆԵՐ

Նոտաներով յերգել. յերաժշտության գրադիսության խորացում—լիգա, կրկնության, նշաններ, վուտաներ, ֆերմատո, կետը քառորդի մոտ, չափ. տառնմավեցերորդական տևողության նշան, համապատասխան պառզայով:

Յերգի ձեւեր—Փրազա, յերաժշտական նոխագասություն, յերկմասանի յերգի ձեռով: Տեղեկություններ ցուցադրված յերգերի հեղինակների մասին:

Տարրական վերլուծման յենթարկել յերաժշտական ստեղծագործություններն ըստ բովանդակության և յերաժշտական արտահայտության միջոցների:

Լուղությամբ վորոշել թեմաները, նկատել նրանց ձևակիրխությունները:

Հասկացողություն յերաժշտության չափի և ոիթմի նշանակության մասին: Լուղությամբ վորոշել յերաժշտական յերկերի չափը: Կարողանալ յերկմասանի և յեռամասանի չափերով կառավարել յերգեր:

Հասկացողություն մելոդիայի և ներգաշնակության մասին:

ՎԵՑԵՐՈՐԴԻ ԽՈՒՄԲ

ԹԵՄԱՏԻԿԱ

1. Անցյալի յԵրաժշտագետները— Գլյուկ, Բամո,

Մոցարտ, Հայդն, Շուման, Շոպեն:

2. ԽՍՀՄ-ի ազգությունների յերգերը.

3. Հայ յերաժշտության զարգացման սկզբնական շրջանը (Կարա-Մուրզա, Յեկմալյան, Կոմիտաս, Նիկ. Տիգրանյան):

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴՐՈՒՅԹԸ

Յերեխաներին ծանոթացնել անցյալի յԵրաժշտագետներ՝ Բամոյի, Գլյուկի, Մոցարտի, Հայդնի, Շումանի:

նի և Շոպենի ստեղծագործությունների հետ։ Պարզել բուրժուական-դեմոկրատական արվեստի տարրերը, համեմատելով այն նախորդ չքջանի յերաժշտական ստեղծագործությունների հետ։

ԽՍՀՄ-ի ազգությունների բազմաբովանդակ, ոիթմիկ և մելոդիկ առանձնահատկություններով հարուստ յերաժշտության միջոցով ընդլայնել յերեխանների յերաժշտական մտահորիզոնը։ Այս թեման սդուագործել ինտերնացիոնալ դաստիարակությունը խորացնելու նպատակով։

Յերեխաններին գաղափար տալ հայ յերաժշտության զարգացման սկզբնական շրջանի և նրա ներկայացուցիչների մասին։

Կարա-Մուրզան վորպես բազմաձայն յերաժշտության տարածող։

Յեկմալյանը վորպես հոգեոր յերաժշտության ներկայացուցիչ։

Կոմիտասը վորպես հայ ժողովրդական յերգի գեղարվեստական մշակողը։ Նիկողայոս Տիգրանյան վորպես արևելյան ֆարսական յերաժշտության մշակող։

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Մոցարտ — Որոր (Սպ. Մելիքյան մանկական ժողովածու)։
2. Ծիծեռնակ (Արշ. Տ-Հովհաննի մանկ. ժող.)
3. Ռեկայնական ժող. յերգ։
4. Վելիկոուս. ժող. յերգ։
5. «Մենք յերգ ենք յերգում» (Մորդավական յերգ. Հոկտ. 15-ամյա հոր. ժողովածու)։
6. Կարա-Մուրզա — «Մատիս տակը մանուշակ»։
7. 8 » — Զինչ ու զինչ ժողովրդ. յերգ։
8. » » — Վարդ կոշիկս » »
9. » » — Թալիշա ճամբեն դուզա » »
10. Կոմիտաս — Քաղհան։
11. » » — Ալազգաղ։
12. » » — Գարունա, ձուն ա արել.
13. » » — Անձրեն եկավ։

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Գլյուկ — Մելոդիա.
2. Ռամո — Տամբուրին.
3. » — Ռիգողոն.
4. Մոցարտ — Նախերդանք «Ֆիգարոյի հարսանիք» ոպերայից.
5. Մոցարտ — Մենյուետ ֆա մաժոր.
6. Հայդն — սոնատ մի մինոր.
7. Շուման — յերգեր (ընտրությամբ).
8. Շուման — «Կառնավալ»-ից կտորներ.
9. Շուլեն — Նոկտյուրն — դո մինոր.
10. Շուլեն — Պոլոնեզ (ընտրությամբ).
11. Շուլեն — Մազուրկա և վալս (ընտրությամբ).
12. Կոմիտաս — Պարեր (դաշնամուրի համար).
13. Նիկ. Տիգրանյան — Հայկական պարեր, արևելյան ու ֆարսական պուեմներ (ընտրել — Հեյդարի)։

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՅԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տոն և կեստոն, ալիտրացիայի նշաններ, գիեզ, բեմու, բեկար, մատոր գամմա, նրա կազմությունը բարդ չափ, ինտերվալները և նրանց անունները։

Կարողանալ վերլուծել ավելի բարդ յերաժշտական յերկեր, քան հինգերորդ խմբակում։ Ղեկավարել ավելի բարդ չափերով (18 չափ)։ Մանոթություն տրիուների և սինկոպի մասին։

Դիմի առնել ավելի բարդ յերգերի ոիթմը։ Նոտաներով գրի առնել ծանոթ յերգերից պարզ, հասարակ հատվածներ՝ առանց արտիրացիայի նշանների։ Անպատճառ-տից յերգել պարզ հատվածներ։ Մանոթություն կլավի-առուրայի մասին։ Մանոթություն յերաժշտականների մասին՝ կապելով դարաշրջանի հետ։

ՅՈԹԵՐՈՌԴ ԽՈՒՄԲ

ԹԵՄԱՏԻԿԱ

1. Գրանսիական Մեծ հեղափոխության դարաշրջանի հեղափոխական յերգերը — Բեթոնովեն։

2. Ռուսաստանի 19-րդ դարի յերաժշտությունը — Գլխնկար, Զայկովսկի, Ռիմսկի-Կորսակով, Մուսորգսկի:

3. Հայ յերաժշտության զարգացման հետազա ըր-ջանը — Ա. Սպենդիարյան, Ա. Տեր-Ղեոնդյան, Բ. Մելիքյան, Սպ. Մելիքյան, Ա. Բարխուդարյան, Կ. Զաքարյան, Հ. Ստեփանյան, Ա. Մանուկյան, Միք. Միրզոյան և Ա. Մայիլյան:

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴՐՈՒՅԹԸ

Յերեխաներին ծանոթացնել Փրանսիական հեղափոխության ըրջանի մասսայական յերգերի հետ, պարզել նրանց յերաժշտական բովանդականության առանձնահատկությունները:

Համեմատել հին կարգերի (նախահեղափոխական ըրջան) յերգերը ԽՍՀՄ-ի ու արևմտարքի հեղափոխական յերգերի հետ, նյութ ունենալով հինգերորդ խմբում մը-շակած յերգերը: Բեթհովենի յերաժշտության մեջ մատնանշել Փրանսիական հեղափոխության արտահայտությունը:

Գլխնկար, Ռիմսկի-Կորսակովի, Զայկովսկու և Մուսորգսկու ստեղծագործությունների միջոցով զարգացր տալ 19-րդ դարի յերկրորդ կիսի ոուս-յերաժշտության պատմական զարգացման մասին:

Յերեխաներին զաղափար տալ հայ յերաժշտության զարգացման հետազա ըրջանի և նրա ներկայացուցիչների մասին:

Սպենդիարյանը վորպես ինստրումենտալ (սիմֆոնիկ) յերաժշտության հիմնադիր:

Ռ. Մելիքյանը — Ա. Տեր-Ղեոնդյան, Սար. Բարիսուդարյան, վորպես Հայկական ինքնուրույն գեղարվեստական յերաժշտության զարգացման առաջին ըրջանի ներկայացուցիչներ:

Կ. Զաքարյան, Ստեփանյան, վորպես Հայկական ինքնուրույն գեղարվեստական յերաժշտության հետագա ըրջանի ներկայացուցիչներ:

Սպ. Մելիքյան, Միք. Միրզոյան, Ազատ Մանուկյան, Ա. Մայիլյան իրքեւ դպրոցական յերաժշտության զրականության ներկայացուցիչներ:

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՅԵՐԳԵՑՈՂ ՀԱՄԱՐ

1. Միշտ առաջ (Փրանս. Հեղափ. յերգ):

2. Ֆրանսիական հեղափոխության հիմն—մշակում Շեխտերի:

3. Փարիզի հեղափոխության հիմն—մշակում Սոկոլնիկովի:

4. Զայկովսկի «Պիկովայա դամա» ոպերայից:

5. Ռիմսկի-Կորսակով «Սնեղուրուչկա, ոպերայից «Լեյույյի յերգը»:

6. Մուսորգսկի «Բվանչչինա» ոպերայից.

7. Սպենդիարյան—Ալմաստ ոպերայից կանանց և տղամարդկանց խմբերգները:

8. Բրում. Մելիքյան «Կաքավիկ»:

9. Ա. Տեր-Ղեոնդյան «Արտերը ծել են»:
» » — «Կաքավիկ».

10. Կարո Զաքարյան «Հարվածային».

11. Հ. Ստեփանյան «Շեկ տղա»:

12. Սպ. Մելիքյան «Թիկոնդա».

13. Միք. Միրզոյան «Մեր արտերում»:
» » — «Ծել ե արտո»:

14. Ազ. Մանուկյան «Շողեր ջան».

15. Դան. Ղազարյան «Շախտյորական».

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՈՒԿԿՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Բեթհովեն—Եգմոնտ, Կորիուլան

2. Գլխնկար — Արտօւտիկ:

» » — Վալս Փանտազիա:

3. Բրում. Կորուակով — Շեխտերազադեյից հատվածներ:

4. Զայկովսկի — Կվարտետից անդանտե կանոնարիւ

5. Մուսորգսկի — Սիմֆոնիկ պատկեր.

6. Ա. Սպենդիարյան — Ալմաստ ոպերա:

» » — Յերեանի ետյուդներ.

» » — Ղրիմի եսքիզներ.

7. Ա. Տեր-Ղեոնդյան — «Աղթամար» — սիմֆոնիկ պոեմ:

19

210

- Ա. Տեր-Ղեոնդյան— «Սեղա» ուշադիմություններ:
8. Ա. Բարխուդարյան— Արևելյան պարեր.
 - » » — Հեքիաթ.
 - » » — Աշնանային.
 - » » — Ակվարել.
 9. Կարո Զաքարյան— Կվարտետ.
 - » » — Կառուցում—սիմֆոնիկ կվարտետ.
 10. Միք. Միրզոյան— «Ծիան ու սազը» ոսկերտ
 - » » — «Կեցցե առողջությունը».
 11. Ազ. Մանուկյան— «Չարի վերջը» ոպերա.
 12. Դան. Ղաղարյան— «Հաղթված բազե» ոպ.

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՅԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գաղափար բասի բանալիի մասին. ոկտավիների մասին: Մինոր գամմայի կազմությունը. կվինտային չըբջան. ծանոթություն տրանսպողիցիայի մասին. ծանոթություն ասիական և յեվրոպական որեւեսորների մասին. անուամբ (կվարտետ, տրիոկվինտետ և այլն):

Հասկացողություն յերաժշտական տոեղծագործությունների խոշոր Փորմաների մասին—ոպերա, սիմֆոնիա, ուժերտյուր, սոնատ և այլն):

Կարսղանալ տարբերել իրար հակադրվող յերկութեմանները և նրանց մշակման ձևերը:

Ըմբոնել յերգերը և տալ նրանց տրամադրության համապատասխան գեղարվեստական կատարում:

Կատարման արտահայտության ձևեր՝ արագ, դանդաղ, ուժեղ, մեղմ և այլն:

Խորացնել նոտաներով թիրթից (с листам) կարդալու ունակությունը:

Ծանոթություն դանապան յերաժշտական դործիքների կազմության և բնակչության մասին:

Տեղեկություններ ուղարկած կատարվող յերգերի հեղինակների մասին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0957399

ԳԻՆՅ 30 Կ.